

«ԱԶԳ-ԲԱՆԱԿ»
ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ
ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆԸ
ԿՐԹԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

*Սույն զեկույցի պատրաստումը հնարավոր է դարձել «Բաց
հասարակության հիմնադրամներ-Հայաստան»
կազմակերպության աջակցությամբ*



«Ազգ-բանակ» գաղափարախոսության քարոզչությունը կրթական համակարգում

Նախարան

Սույն զեկույցը պատրաստվել է «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի կողմից կատարված հետազոտության հիման վրա: Ձեկույցը նպատակ ունի ներկայացնել ամփոփ տեղեկատվություն 2016թ. հոկտեմբերի մեկից մինչև 2018թթ. մարտի 10-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ուսումնական հաստատություններում միլիտարիզացիայի գործընթացի վերաբերյալ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով «ազգ-բանակ» հայեցակարգի քարոզչությանը: Ձեկույցը պատրաստվել է լրատվամիջոցներում, դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների կայքերում և ուսումնական հաստատությունների պաշտոնական էջերի կողմից Facebook սոցիալական կայքում արված հրապարակումների մշտադիտարկման արդյունքների հիման վրա: Մշտադիտարկումը նպատակ ուներ պարզել, թե արդյոք հայկական ուսումնական հաստատություններում կա համակարգված՝ այսինքն՝ վերևից-ներքև պարտադրվող քարոզչություն:

Հիշեցնենք, որ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի առաջին գլխի 4-րդ հոդվածի համաձայն՝ ուսումնական հաստատություններում արգելվում է իրականացնել քարոզչություն:

2017 թվականի ապրիլի 20-ին «Ազգ-բանակ-2017» համաժողովին կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը հայտարարել էր, որ «Հայաստանի կրթական համակարգի հիմնական նպատակը հայ տեսակի շարունակականության ապահովումն է»՝ ընդգծելով հայրենասիրական գաղափարախոսության կարևորման անհրաժեշտությունը և ռազմագիտություն առարկայի ուսուցիչների վերադարձը դպրոց: Նախարարը նաև որպես կրթական



որակի մեջ արձանագրված լուրջ հաջողություն էր ներկայացրել այն հանգամանքը, որ ապրիլյան պատերազմում եղել են համալսարաններ, որոնցից հարյուրավոր կամավորներ են ցուցակագրվել և եղել են կամավոր զոհեր:¹

«Մենք պետք է կարողանանք ազգ-բանակ գաղափարախոսությունը մատչելի, հասանելի դարձնել յուրաքանչյուր ընտանիքի համար: Սա կրթության համակարգի մեծագույն առաքելությունն է...Մենք պետք է կարողանանք այնպես անել, որ յուրաքանչյուր դպրոցում լինեն երեխաների տասնյակներ, ովքեր կերազեն դառնալ սպա», - հայտարարել էր նախարարը՝ դիմելով համաժողովին ներկա ուսուցիչներին և տնօրեններին:

ԿԳ նախարարը նաև շնորհակալություն էր հայտնել Պաշտպանության նախարարությանը համագործակցության համար: Այս համագործակցությունը թեև նոր չէ, սակայն նոր ակտիվություն է ստացել «ազգ-բանակ» հայեցակարգի գործարկումից ի վեր: Խորացել է պաշտպանական և կրթական գերատեսչությունների, դրանց ենթակայության տակ գործող կառույցների համագործակցությունը: Կրթական հաստատություններ են այցելել Պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, աշակերտներին և ուսանողներին ներկայացվել են «Ես եմ» և «Պատիվ ունեմ» ծրագրերը: ԿԳՆ-ն համատեղ միջոցառումներ է իրականացրել ՊՆ-ի հետ: Նախկինում անցկացվող միջոցառումներ, ինչպես, օրինակ «Կորյուն» ռազմամարզական խաղերը ևս կիրառվել են «ազգ-բանակ» հայեցակարգի քարոզչության համար:²

ԿԳՆ պաշտոնաթերթի հանդիսացող «Կրթություն» շաբաթաթերթը ակտիվ կերպով լուսաբանել է «ազգ-բանակ» համատեքստում բանակային անցուղարձր: Շաբաթաթերթի հունվարի 31-ի համարն ունեցել է առանձին «Բանակ» խորագիր: Ֆեյսբուք սոցիալական ցանցում շաբաթաթերթի էջը³ զբաղվում է հայեցակարգի քարոզչությամբ:

Բանակ-կրթական ոլորտ կապի խորացմանը միտված նախաձեռնություններով հանդես է եկել նաև Պաշտպանության նախարարությունը: 2017-ի փետրվարին «Արարատ» հեռուստաընկերության եթերում նախարարության մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննսիյանը հայտարարել էր, որ «ազգ-բանակ» հայեցակարգը նաև «այն աշխատանքն է, որը տարվելու է բուհերում, դպրոցներում՝ սերտ համագործակցությամբ»:⁴ Նույն

¹ Մեր երկիրը չունի թիկունք և սահման, առաջին կամ հետին գիծ. Լևոն Մկրտչյան, ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքէջ, edu.am/index.php/am/news/view/6568

² Ազդարարվել է «Կորյուն» ռազմամարզական խաղերի մեկնարկը, ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքէջ, edu.am/index.php/am/news/view/6798

³ Կրթություն շաբաթաթերթ, ՖԲ էջ, [facebook.com/krtutyun.am/posts/1837350506524257](https://www.facebook.com/krtutyun.am/posts/1837350506524257)

⁴ «Արարատ» հ/ը, «Հիմնաքար», 08.02.17-ի թողարկում, <https://www.youtube.com/watch?v=zcv0JbuawOI>

հաղորդման ընթացքում Հովհաննսիյանն ասել էր, որ հայեցակարգն «առաջինը լուծելու է նաև կրթական սեգմենտը, որովհետև կրթությունը ռազամավարական բաղադրիչ է» և որ բանակն ու կրթությունը փոխկապակցված երևույթներ են:

2018թ.-ի մարտին պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը հայտարարեց, որ նախարարությունը ԿԳՆ-ի հետ աշխատող խումբ ունի, որն ուսումնասիրում է դպրոցներում արդեն իսկ դասավանդվող «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի վերաբերյալ գոյություն ունեցող «բացը», քանի որ շաբաթական մեկ օր այս առարկայի դասավանդումը «լավագույն լուծումը չէ»: Գերատեսչությունը մտածում է ամառային պարտադիր ճամբարների ցանց ստեղծել, որը կապահովի նախնական զինպատրաստության ներածական դասընթաց՝ միաժամանակ տղաներին պատրաստելով բանակային կյանքին:⁵

«Ազգ-բանակ» հայեցակարգի ներդրման վերաբերյալ քննարկումներից ի վեր կրթական ոլորտի կարևորագույն փոփոխություններից է նաև ուսումնական հաստատություններում ռազմական միջոցառումների թվի աննախադեպ աճը:

«Իրազեկ քաղաքացիների միավորման» մշտադիտարկամ թիմի 2017թ.-ի հունվարից 2018թ.-ի մարտն ընկած ժամանակահատվածում իրականացված ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրահանգել, որ պաշտպանության և կրթության և գիտության նախարարությունների միջև համագործակցության արդյունքում կրթական համակարգը եղել է «ազգ-բանակ» գաղափարախոսության քարոզչության ամենակտիվ հարթակներից մեկը:

Նախադպրոցական հաստատություններ

Իրականացված մշտադիտարկման արդյունքում արձանագրել ենք, որ թեև հանրապետության նախակրթական հաստատություններում համակարգված կերպով «ազգ-բանակ» գաղափարախոսության քարոզչություն չի իրականացվել, սակայն մանկապարտեզների սաների մասնակցությամբ կազմակերպվել են բանակային թեմայով միջոցառումներ: Հասարակություն-բանակ կապի ամրապնդման համատեքստում մանկապարտեզի և բանակի միջև կապերի ստեղծման ուղղությամբ տարվել են աշխատանքներ, ինչպես նաև հանրապետության մի շարք մանկապարտեզներում կազմակերպվել են զինձառայողներին նյութական աջակցության ցուցաբերման միջացոռումներ:

⁵ Ուր են ուղղվել ՊՆ գնումներից խնայած գումարները. Վիգեն Սարգսյանի բացառիկ հարցազրույցը Ռազմինֆոյին, Ռազմինֆո, 12.03.2018-ի հրապարակում, <https://razm.info/123112>

Այսպես, օրինակ, Երևանի Նուբարաշենի մանկապարտեզի սաներն ու աշխատակիցները հունվարի 28-ի կապակցությամբ այցելել են զորամասերից մեկն՝ իրենց հետ տանելով նվերների փաթեթներ:⁶

Հունվարի 28-ին՝ Բանակի օրվա կապակցությամբ մանկապարտեզներում անց են կացվել տոնական միջոցառումներ, կազմակերպվել են բեմադրություններ: Այս միջոցառումների ընթացքում մանկապարտեզների սաները



կրել են զինվորական համազգեստներ, քայլել շարային քայլով, կատարել ռազմական երգեր: Սպայական համազգեստ են կրել նաև մանկապարտեզի դաստիարակները:⁷

Հայոց բանակի կազմավորման օրվա կապակցությամբ, որոշ մանկապարտեզներում կազմակերպվել են նաև զոհված մարտիկների հերոսացման միջոցառումներ⁸: Այս հաստատություններից որոշների սաները այցել են զոհված զինծառայողների գերեզմաններ, հարգանքի տուրք մատուցել նրանց հիշատակին:⁹

Դպրոցներ

Մշտադիտարկման արդյունքում կարող ենք արձանագրել, որ հանրապետության հանրակրթական հաստատություններում իրականացվել է «ազգ-բանակ» հայեցակարգի համակարգված քարոզչություն: Որոշ դեպքերում նկատում ենք աշակերտների ռազմականացմանը միտված անհատական, ոչ համակարգված նախաձեռնություններ ևս:

Սոցիալական մեդիայում դպրոցների էջերի հրապարակումներին հղվելով արձանագրում ենք, որ հանրապետության դպրոցներում 2017 թվականին

⁶ Նուբարաշենի մանկապարտեզ, ՖԲ էջ, [facebook.com/nubarashenmankapartez/posts/1989935661261348?pnref=story](https://www.facebook.com/nubarashenmankapartez/posts/1989935661261348?pnref=story)

⁷ Բանակի օրվան նվիրված բաց դաս թիվ 150 մանկապարտեզում, <https://www.youtube.com/watch?v=mLup1uDOWXQ>

⁸ Մկսենք Նորից - Հայոց բանակի 25 ամյակ (թիվ 114 մանկապարտեզ) <https://www.youtube.com/watch?v=3-CVakW5FZU>

⁹ Ալավերդու համար 1 մանկապարտեզի սաները այցելեցին անհայտ զինվորի հուշարձան, «Անկյուն+3» հ/ը, <https://www.youtube.com/watch?v=EzSPed9iXXU>

տարատեսակ միջոցառումներ են կազմակերպվել են «ազգ-բանակ» թեմայով: Այս միջոցառումները եղել են պարբերական և կրել են թե՛ տեղեկատվական-քարոզչական բնույթ (բաց դասեր, քննարկումներ, ծրագրերի ներկայացում), թե՛ մշակութային-քարոզչական (միջոցառումներ, հանդեսներ):

Տեղեկատվական-քարոզչական միջոցառումների շրջանակում ավագ դպրոցների աշակերտներին ներկայացվել են Պաշտպանության նախարարության «Ես եմ» և «Պատիվ ունեմ» ծրագրերը, «բանակի դերն ու նշանակությունը, ազգ-բանակ հայեցակարգը»:¹⁰ Միջոցառումներին մասնակցել են ՀՀ Ոստիկանության



տվյալ շրջանի անչափահասների գործերով բաժնի աշխատակիցները ևս: Ոստիկանության աշխատակիցները հանդես են եկել «Բանակ-զինվոր-հայրենիք» թեմայով դասախոսություններով¹¹: Երևանի N94¹², N142¹³, N182¹⁴ ավագ դպրոցներում գերատեսչության աշխատակիցների կողմից անց են կացվել «Աշակերտ, ոստիկան, զինվոր՝ հայրենիքի նվիրյալ» խորագրերով դասախոսություններ: Նման միջոցառումներ իրականացվել են հանրապետության մյուս քաղաքներում ևս: «Հայրենիք-բանակ» թեմայով քննարկում է իրականացվել Արմավիր քաղաքում,¹⁵ ինչպես նաև Արմավիրի

¹⁰ Վանաձորի N5 ավագ դպրոցի 04.10.2017-ի հրապարակումը Ֆեյսբուքում, <https://www.facebook.com/vanadzorschoolhamarhing.teryan/posts/1958125611102223>

¹¹ Ընդհանուր անվան N36 դպրոցի 13.10.2017-ի հրապարակումը Ֆեյսբուքում, <https://www.facebook.com/im.dproc/posts/1756957437934528>

¹² Զինա Խաչատրյանի 16.11.2017-ի հրապարակումը Ֆեյսբուքում, <https://www.facebook.com/zina.khachatryan.3/posts/1524380337597058>

¹³ Ա. Ղարիբյանի անվան N142 ավագ դպրոցի 13.10.2017-ի հրապարակումը Ֆեյսբուքում, https://www.facebook.com/permalink.php?story_fbid=883283081853961&id=252662304916045

¹⁴ Գ. Էմինի անվան N182 ավագ դպրոցի 03.10.2017-ի հրապարակումը Ֆեյսբուքում, https://www.facebook.com/pg/GEmini182AvagDproc/photos/?tab=album&album_id=836396736524649

¹⁵ Արմավիրի N4 ավագ դպրոցի 03.10.2017-ի հրապարակումը Ֆեյսբուքում, <https://www.facebook.com/Armavir4/posts/451855385215895>

մարզի այլ բնակավայրերում: Ոստիկանների և զինվորականների մասնակցությամբ դասախոսություն է կազմակերպվել նաև նույն մարզի Թաիրով գյուղի դպրոցում:¹⁶

«Աշակերտ, ոստիկան, զինվոր՝ հայրենիքի նվիրյալ» խորագրով միջոցառում անց է կացվել Գորիսի N1 և N4 ավագ դպրոցներում ևս:¹⁷ Ոստիկանության և ՊՆ աշխատակիցները դպրոցի 12-րդ դասարանի աշակերտների հետ զրուցել են «բանակ-հասարակություն կապի ամրապնդման մասին»: Աղջիկներին ներկայացվել է կանանց համար պայմանագրային հիմունքներով կամավոր ծառայության հնարավորությունը: Մի շարք դպրոցներում պաշտպանության նախարարության սպաները պարբերաբար հանդես են եկել տարբեր դասախոսություններով, այդ թվում՝ «Հայ ազգային գաղափարախոսությունը» թեմայով:¹⁸ «Ազգ-բանակ» թեմայով զրույցներն ավագ դպրոցների աշակերտների հետ կազմակերպվել են և մայրաքաղաքում, և մարզերում¹⁹:

Կրթական որոշ հաստատություններ հանդես են եկել սեփական նախաձեռնություններով ևս՝ կազմակերպելով բարեգործական միջոցառումներ բանակի համար: Երևանի N127 դպրոցն իրականացրել է «Ազգ-բանակ, դպրոց-բանակ» խորագրով միջոցառում, որը, համաձայն հաղորդման՝ «մեծ ոգևորությամբ ողջունել է ՀՀ ԿԳՆ-ն»՝ հանձինս նախարար Լևոն Մկրտչյանի, ինչպես նաև աջակցություն է ստացել Երևանի քաղաքապետարանից և Պաշտպանության նախարարությունից:²⁰ Նմանատիպ՝ սեփական նախաձեռնությամբ իրականացվող, միջոցառումներ կազմակերպվել են նաև մարզերում: Դպրոց-բանակ կապի ամրապնդման նպատակով Բերդի N1 դպրոցի աշակերտներն այցելել են ՀՀ ՊՆ N գորամաս՝ իրենց հետ տանելով քաղցրավենիքի ծանրոցներ:²¹

Որպես մշակութային-քարոզչական միջոցառումներ ուսումնական տարվա ընթացքում դպրոցներում կազմակերպվել են ռազմական խաղերի, բանակային թեմաներով շարադրությունների մրցույթներ:²² Միջոցառումներին ներկա են եղել

¹⁶ Թաիրով գյուղի դպրոցի 21.10.2017-ի հրապարակումը Ֆեյսբուքում, <https://www.facebook.com/100009495666919/videos/1921345288191975/>

¹⁷ Հանդիպում ավագ դպրոցի բարձր դասարանիների հետ, Հայ զինվոր, 25.10.2017, <http://www.hayzinvor.am/50347.html>

¹⁸ Կապանի 7 դպրոցի 24.01.2018-ի հրապարակումը Ֆեյսբուքում, <https://www.facebook.com/kapani.tivyotdproc/posts/2004871869752379>

¹⁹ Մասիսի միջնակարգ դպրոցի 05.10.2017-ի հրապարակումը Ֆեյսբուքում, https://www.facebook.com/permalink.php?story_fbid=531224417213401&id=100009775418314

²⁰ Մարիամ Հայրապետյանի 12.12.2017-ի գրառումը Ֆեյսբուքում, https://www.facebook.com/perhttps://www.facebook.com/kapani.tivyotdproc/posts/2004871869752379malink.php?story_fbid=458640527864949&id=327863454275991

²¹ Բերդի N1 դպրոց, https://www.facebook.com/permalink.php?story_fbid=189687281782781&id=100022245301337

²² Ռազմիկ Յան անունով գրանցված օգտատիրոջ 16.12.2017-ի գրառումը Ֆեյսբուքում, <https://www.facebook.com/razmikhrshoyan94/posts/2037997206478889>

ՊՆ պաշտոնյաներ: Երևանի N132 միջնակարգ դպրոցում կազմակերպվել է «Հայկյան խաղեր» զինվորական պատրաստության մրցույթը: Ինչպես նաև անց են կացվել շարային պատրաստության դասեր միջին դասարանների աշակերտների համար, որոնցում ներգրավված են եղել ն՛ աղջիկները, ն՛ տղաները:²³ Պաշտպանության նախարարության աջակցությամբ դպրոցում բացվել և կահավորվել է հրաձգարան²⁴: Պաշտպանության նախարարի կողմից դպրոցի սաները հրավիրվել են Մոնթե Մելքոնյանի անվան ռազմական ուսումնարան, ինչը, համաձայն կազմակերպիչների, «հնարավոր է նոր սերնդին ապագայում մասնագիտություն ընտրելիս տանի զինվորական պատվաբեր մասնագիտության ընտրման»:

ՀՀ ԿԳՆ-ի և ՊՆ-ի կադմից համատեղ իրականացվել է ռազմահայրենասիրական խաղերի «Կորյուն» մրցույթը, որը 2017թ. կիրառվել է որպես 9-12-րդ դասարանների աշակերտների շրջանում ազգ-բանակ հայեցակարգի քարոզչությունը տարածելու համար հարթակ:²⁵

Ազգ-բանակ կապի ստեղծման նպատակով որոշ դպրոցների միջև անց է կացվել պաստառների նկարագրողական «Հայ զինվոր» խորագրով մրցույթ:²⁶ Բանակային թեմաներով պատի թերթեր են փակցվել բազմաթիվ դպրոցներում:²⁷

Դպրոցներում անց է կացվել «Դասը վարում է սպան» ծրագիրը, որի շրջանակում «հայրենասիրության դասեր» են վարել տարբեր կոչումներ ունեցող զինվորականներ ՊՆ զորամասերից:²⁸

Մեդիայում առկա և սոցիալական ցանցերում դպրոցների էջերում հրապարակվող լուսանկարների մշտադիտարկման արդյունքում պարզ է դառնում, որ մշտադիտարկման ուսումնասիրության ենթակա ամիսների ընթացքում դպրոցներում բացվել են զոհված զինծառայողների անունները կրող լսարաններ, միջանցքներում «Ազգային հերոսների» ցուցատախտակներից բացի հայտնվել են «նորօրյա հերոսների» մասին պատմող պաստառներ՝ նվիրված ապրիլյան պատերազմում զոհված զինծառայողներին:

Ռազմամարզական խաղեր Գյումրիում, Tsayg.am, <https://www.youtube.com/watch?v=moHAnu6DrBc>

²³ Հայկյան ռազմամարզական խաղեր, <https://www.youtube.com/watch?v=vqwH7VGfddI>

²⁴ Ինձ փնտրեք ներկաների մեջ, Հայ զինվոր, 18.12.2017, <http://www.hayzinvor.am/51650.html>

²⁵ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի 29.11.2017-ի գրառումը Ֆեյսբուքում, <https://www.facebook.com/shengavit.am/posts/1541236629293219>

Մուղնու Մ. Աշճաշյանի անվան հիմնական դպրոցի 07.11.2017-ի գրառումը Ֆեյսբուքում, <http://bit.ly/2ntABAF>

²⁶ Megri news, 28.10.2017, <https://www.facebook.com/MeghriNews/videos/1760759793943586/>

Արծրուն Հովհաննիսյանի հրապարակումը 08.11.17-ի Ֆեյսբուքում, <https://www.facebook.com/arcrun/posts/1536447356390867>

²⁷ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=213014015922664&id=100016422003240

²⁸ Կապանի N13 հիմնական դպրոց, https://www.facebook.com/permalink.php?story_fbid=1701769226771797&id=100008162078039

Աբովյան քաղաքի N1 Խաչատուր Աբովյանի անվան դպրոցը որպես դպրոցի բարձրագույն արժեք է հայտարարել «ազգ-բանակ-հայրենիք»-ը: Համաձայն դպրոցի Ֆեյսբուք սոցիալական ցանցում արված հրապարակման՝ «կրթօջախում դա գիտակցում են բոլորը»:²⁹

Աշակերտներին բաց դասերի միջոցով ծանոթացրել են «ազգ-բանակ» հայեցակարգին, հայրենասիրական երգերի ուղեկցությամբ, ներկայացվել է «հայ զինվորի դերն ու բարձր բարոյական կերպարը»:³⁰

Հայոց բանակի կազմավորման օրվա կապակցությամբ միջոցառումներ իրականացվել են նաև դպրոցներում, որոնց ներկա են եղել զինծառայողներ:³¹

Հանրապետության մի շարք դպրոցներում կազմակերպվել է «Հայ զինվորը» խորագրով միջոցառումներ, որոնց ընթացքում ընթերցվել է նախարար Վիգեն Սարգսյանի «Ազգ-բանակ 2017» համաժողովի ելույթը:³²

2018թ.-ի մարտին Շիրակի մարզում տեղական իշխանության մարմինները պարզևատրել են մանկավարժների, ում աշակերտները ծառայության ընթացքում աչքի են ընկել «կյանքը հայրենիքն զոհաբերելու պատրաստակամությամբ»:³³

Արտադպրոցական կրթական հաստատություններ

Հայաստանում գործող արտադպրոցական կրթության մի շարք հաստատություններ՝ այդ թվում քոլեջներ, ստեղծագործական, գեղագիտական, տեխնոլոգիական կենտրոններ, արվեստի դպրոցներ, մարզադպրոցներ և տարատեսակ ակումբներ ևս զբաղվել են «ազգ-բանակ» հայեցակարգի հանրային աջակցությամբ:

2017 թվականի փետրվարից «ԹՈՒՄՈ-բանակ» ծրագրի շրջանակում Դիլիջանի Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում ժամկետային զինծառայողները հնարավորություն է տրվել ձեռք բերել համակարգչային ծրագրավորման, ռոբոտաշինության և այլ հմտություններ:³⁴ Արդեն հունիսին

²⁹ Աբովյանի Խ. Աբովյանի N1 ավագ դպրոցի 27.10.2017-ի գրառումը Ֆեյսբուքում, <https://www.facebook.com/AbovyaniTiv1AvagDproc/posts/1055870014553942>

³⁰ Ա. Ղարիբյանի անվան N142 ավագ դպրոցի 02.10.2017-ի հրապարակումը Ֆեյսբուքում, https://www.facebook.com/permalink.php?story_fbid=876453059203630&id=252662304916045

³¹ «Բանակը մեր տունն է, մեր բերդ-ամրոցը», <http://my.mamul.am/am/post/77290>
«Շնորհավոր տոնդ, Հայոց բանակ...», <http://my.mamul.am/am/post/77287>

³² Հայ զինվորը, www.dasaran.am/apps/news/item/id/7363, Հայ զինվորը, Հաճնի N1 դպրոց, www.dasaran.am/apps/news/item/id/7426

³³ Պարզևատրվել են հայրենանվեր գործունեության համար, տեսանյութ, Ցայգ հեռուստաընկերություն, հրապարակվել է 06.03.2018-ին, <https://www.youtube.com/watch?v=ODN2DRGxuW0>

³⁴ Թումո-բանակ ծրագիրը Արցածում, tumo.org/hy/blog/-2017-05-08-15-08/

պաշտպանության նախարարը հայտարարեց Թումոն խոշոր զորամասեր տանելու մասին:³⁵

Բանակին նվիրված տոնական միջոցառումներ են իրականացվել արվեստի դպրոցներում: Տոնակատարությունների ընթացքում դպրոցների սաները կրել են զինվորական համազգեստեր:³⁶ Արվեստի որոշ դպրոցներում կազմակերպվել են զինվորական թեմայով ցուցահանդեսներ, միջոցառումներ:³⁷

Համանման միջոցառումներ անց են կացվել նաև միջին մասնագիտական կրթության հաստատություններում: Սոցիալական ցանցերում իրականացրած մեր մշտադիտարկման արդյունքում արձանագրում ենք, որ «ազգ-բանակ» խորագրով մի շարք հրապարակումներ արվել են նաև մշակույթի, արվեստի քոլեջների՝ այդ թվում Երևանի մշակույթի պետական քոլեջի,³⁸ Երևանի Էստրադային և ջազային արվեստի պետական քոլեջի³⁹ կողմից:

Որպես արտադպրոցական կրթության հաստատություն Կրթության և գիտության նախարարության ենթակայության տակ գործում է հրաձգության հանրապետական մարզադպրոց:⁴⁰

Բարձրագույն ուսումնական հաստատություններ

«Իրազեկ քաղաքացիների միավորման» մշտադիտարկման թիմի իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ «ազգ-բանակ» հայեցակարգի քարոզչությունն ակտիվ կերպով իրականացվել է նաև հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Պայմանականորեն «բուհ-բանակ» կոչվող համազործակցության ձևաչափը ներառում է տարատեսակ բանակումներ, զիտաժողովներ, այցելություններ զորամասեր, հաղնիպումներ զինձառայողների հետ, արշավներ և այլն: Բուհեր են այցելել Պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ, բարձրաստիճան

³⁵ Թումո-բանակ. երբ երգեր եւ ոտբոսներ են ստեղծում զինվորները, Մեդիամաքս, www.mediamax.am/am/news/society/24698/

³⁶ Գ.Բուդաղյանի անվան արվեստի դպրոց, ՖԲ էջ, www.facebook.com/budaghyanianvarvestidproc/posts/2293572137535855

³⁷ Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց - կերպարվեստի բաժին, ՖԲ էջ, <https://www.facebook.com/kerparvest.ru/posts/2438009983006336>

³⁸ Երևանի մշակույթի պետական քոլեջ ՊՈԱԿ, ՖԲ էջ, <https://www.facebook.com/YSCCOfficial/photos/a.1450299415281822.1073741828.1431699783808452/1767005676944526/?type=3&theater>

³⁹ Էստրադային Ջազային արվեստի քոլեջ, ՖԲ էջ, <https://www.facebook.com/jazzcollege/posts/1987829084771443>

⁴⁰ Հայրենասիրությունը չի սահմանափակվում մեկ առարկայով. Լ. Մկրտչյան, ՀՀ ԿԳՆ պատոնական կայքէջ, <http://edu.am/index.php/am/news/view/6570>

պաշտոնյաներ, ուսունաղներին ներկայացվել են «Ես եմ» և «Պատիվ ունեմ» ծրագրերը:⁴¹

Հարկ է նշել նաև, որ բուհերի և բանակի միջև կապի սերտացման քաղաքականությունը նոր չէ և վարվում էր նախկինում ևս: Մակայն 2017 թվականից սկսած այս քաղաքականության ավելի ակտիվ է: Մշտադիտարկման արդյուքները փաստում են, որ բուհերը դարձել են «Ես եմ» և «Պատիվ ունեմ» ծրագրերի քարոզչության առավել հաճախ կիրառվող հարթակներ:

Երևանի պետական համալսարանը բազմիցս հայտարարել է «ԵՊՀ-բանակ» կապի կարևորության մասին: Առաջին անգամ կազմակերպվել են զինվորական նախնական պատրաստության դասընթացներ համալսարանի երիտասարդ



դասախոսների համար: Ակնկալվում է, որ դրանք շարունական բնույթ են ունենալու:⁴² Բուհում

ռազմական համալսարանների ներկայացուցիչների կողմից կազմակերպվել են սպայական դասընթացներ ուսանողների համար⁴³: Համալսարանը, ԵՊՀ

արհեստակցական կազմակերպության նախագահ Արմեն Ավետիսյանի հայտարարության համաձայն, «Ազգ-բանակ գաղափարին միտված այս նախաձեռնությունը կնպաստի դասախոսների կրակային պատրաստության վիճակի բարելավմանը, ռազմական գիտելիքների զարգացմանը, ինչպես նաև բանակ-հասարակություն կապի ամրապնդմանն ու զարգացմանը»:⁴⁴ Իր հերթին, համալսարանը վերապատրաստել է ՊՆ քաղաքացիական և զինովական ծառայողների՝ մասնավորապես սպա-հոգեբանների:⁴⁵ Ուսանողներն այցելել են

⁴¹ Անմիջական գրույց պաշտպանության նախարարի հետ, ԵՊՀ կայքէջ, 18.07.2017, <http://www.y-su.am/news/hy/Final-day-of-Student-Military-Camping>

⁴² ԵՊՀ դասախոսները ստավել են նախնական զինպատրաստության վկայականներ, ԵՊՀ կայքէջ, 02.05.2017 <http://www.y-su.am/news/hy/Preliminary-military-readiness-for-YSU-lecturers>

⁴³ Սպայական դասընթացներ ուսանողների համար, ԵՊՀ կայքէջ, 15.03.2017, <http://www.y-su.am/news/hy/Officer-training-for-students>

⁴⁴ Երիտասարդ դասախոսները զինվորական նախնական պատրաստության դասընթաց կանցնեն, ԵՊՀ կայքէջ, 07.04.2017, <http://www.y-su.am/news/hy/Military-readiness-for-young-lecturers>

⁴⁵ Սպա-հոգեբանները վերապատրաստում են անցել ԵՊՀ-ում, ԵՊՀ կայքէջ, 28.05.2017, <http://www.y-su.am/news/hy/Training-for-officers-psychologists-at-YSU>

մարտական հերթապահություն իրականացնող զորամասեր, այնտեղ հանդես եկել մշակութային ելույթներով:⁴⁶

Հուլիսին Լեռնային Ղարաբաղում տեղի է ունեցել «Համահայկական ուսանողական ռազմական բանակում»-ը,⁴⁷ որի մասնակիցներն այցելել են զորամասեր, ապրել զինվորական առօրյայով:⁴⁸ Ծրագրի ընթացքում կայացել է նաև հանդիպում ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի հետ: Հանդիպմանը ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանն անդրադարձել է «ազգ-բանակ հայեցակարգի շրջանակում ԵՊՀ-ի կողմից իրականացվող բազմաբնույթ ծրագրերին և շեշտադրել դրանց շարունակականության անհրաժեշտությունը»:⁴⁹

ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի 2017 թվականի ամենամյա «Միացյալ Հայաստան» ծրագիրն անց է կացվել «ազգ-բանակ» նշանաբանով: Ծրագիրը միտված է «բանակ-հասարակություն կապի ամրապնդմանը»:⁵⁰ Դրա շրջանակում ուսանողների հետ քննարկվել են «Ես եմ» և «Պատիվ ունեմ» ծրագրերը:⁵¹

ԵՊՀ-ից բացի առանձնահատուկ կարևորություն է տրվել Հայաստանի Բժշկական համալսարանում հայեցակարգի քարոզչությանը:

2017թ. մարտին Վիգեն Սարգսյանը ԵՊՀ ուսանողների հետ հանդիպմանը հայտարարել է, որ ազգի ընդհանուր խնդիրներին դիմակայելու համար «ամեն ինչ սկսում է նման լսարաններից, դպրոցից, համալսարանից, ընտանիքից»: Նախարարն ուսանողներին ասել է, որ ազգ բանակը «ազգային գաղափարախոսության և աշխարհընկալման մի կարևոր բաղկացուցիչ է»:⁵²

Տարվա ընթացքում բարձրաստիճան զինձառայողներ այցելություններ են ունեցել նաև այլ համալսարաններ: ԶՈՒ ԳՇ պետ Մովսես Հակոբյանն, օրինակ, այցելել է հայ-ռուսական համալսարան, խոսել «զինված ուժերում ընթացող

⁴⁶ Արցախյան այցը նվիրված էր մայիսյան եռատոնին, ԵՊՀ կայքէջ, 10.05.2017,

<http://www.yasu.am/news/hy/Triple-holiday-in-Artsakh>

⁴⁷ Մայր բուհի ուսանողները կլինեն զինվորի պես ու զինվորի կողքին, ԵՊՀ կայքէջ, 12.07.2017,

<http://www.yasu.am/news/hy/Pan-Armenian-Student-Military-Camping>

⁴⁸ Ուսանողական բանակումի մասնակիցներն արդեն Արցախում են, ԵՊՀ կայքէջ, 14.07.2017,

<http://www.yasu.am/news/hy/Students-are-in-Artsakh>

⁴⁹ Անմիջական զրույց պաշտպանության նախարարի հետ, ԵՊՀ կայքէջ, 18.07.2017,

<http://www.yasu.am/news/hy/Final-day-of-Student-Military-Camping>

⁵⁰ Մեկնարկում է 9-րդ ամենամյա «Միացյալ Հայաստան» ծրագիրը, ԵՊՀ կայքէջ, 31.07.2017,

<http://www.yasu.am/news/hy/Pilgrimage-to-Artsakh-2017>

⁵¹ Ուխտագնացություն դեպի Արցախ, նպատակը՝ իրականություն, ԵՊՀ կայքէջ, 09.08.2017,

<http://www.yasu.am/news/hy/Pilgrimage-to-Artsakh-2017-Final>

⁵² Հանդիպում Երևանի պետական բժշկական համալսարանում, «Հայ Զինվոր», 01.03.2017,

<http://www.hayzinvor.am/45363.html>

բարեփոխումների, արձանագրված հաջողությունների և առաջիկա ծրագրերի մասին»:⁵³

Շիրակի Միքայել Նալբանդյանի անվան պետական համալսարանում, ՋԼՄ-ների փոխանցմամբ, գործում է ռազմական հոգեբանություն մասնագիտությամբ մագիստրատուրա, որտեղ սովորելու են ապրիլյան պատերազմի մասնակիցների և զոհված զինվորների ընտանիքների անդամները: Համալսարանը զինվորական հոգեբանության ամբիոնը բացել է, որպես արձագանք նախարար «Վիզեն Սարգսյանի ազգ-բանակ գաղափարադրույթին»:⁵⁴

ԿԳՆ կազմակերպել է «Մասնագիտական կրթությունը՝ սահմանամերձ բնակավայրերի հզորացման նախապայման» խորագրով գիտաժողով, որին քննարկվել է նաև ազգ-բանակ հայեցակարգի համատեքստում ռազմական կրթության կարևորությունը: պաշտպանության նախարարության ներկայացուցիչը հանդես է եկել «Ազգ-բանակ» գաղափարախոսությունը, դրա իրագործմանն ուղղված համագործակցային հնարավորությունները Տավուշի մարզում» ելույթով:

Սոցիալական ցանցերում «ազգ-բանակ» գաղափարախոսության քարոզչության մշտադիտարկման արդյունքում պարզ է դարձել, որ հայեցակարգի քարոզչությունն իրականացվել է նաև հանրապետության համալսարանների, դրանց ուսումնական խորհուրդների, ուսումնական գիտական ընկերությունների սոցիալական էջերում, ինչպես, օրինակ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի,⁵⁵ Երևանի պետական համալսարանի,⁵⁶ ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի,⁵⁷ ԵՊՀ ուսանողական խորհրդի,⁵⁸ ԵՊՀ մարտական պատրաստության ակումբի,⁵⁹ Գավառի պետական

⁵³ ՀՀ ՋՈՒ ԳՇ պետը հյուրընկալվել է Հայ-ռուսական համալսարանում, «Հայ զինվոր», 10.02.2017, <http://www.hayzinvor.am/44948.html>

⁵⁴ Լեզենդար Կոմանդոսը կղասավանդի Շիրակի համալսարանում. ուսանողները կլինեն ապրիլյան պատերազմի մասնակիցները, «Առավոտ», 26.07.2017, <http://www.aravot.am/2017/07/26/899472/>

⁵⁵ «Այցելություն դիրքապահ զորամաս» աղբյուրը՝ ՀՊՏՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ֆեյսբուքյան էջ, <https://www.facebook.com/Asue.Sc/photos/a.107673169325038.14537.105291282896560/1235824833176527/?type=3&theater>, հրապարակվել է՝ 26.02.2017

⁵⁶ «Օգոստոսի 8-ին ավարտվեց ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի 9-րդ կրթամշակութային մեկշաբաթյա արշավ-ուխտագնացությունը դեպի Արցախ, որն այս տարի ուներ «Ազգ-բանակ» նշանաբանը: » աղբյուրը՝ ԵՊՀ ի ֆեյսբուքյան էջ, <https://www.facebook.com/ysu.am/photos/a.226952677366780.60229.226947480700633/1569263573135677/?type=3&theater>, հրապարակվել է՝ 09.09.2017

⁵⁷ «ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն» աղբյուրը՝ <https://www.facebook.com/YSUStudentAffairsCentre/>

⁵⁸ «ԵՊՀ ուսանողական խորհուրդ» աղբյուրը՝ https://www.facebook.com/YSUStudentCouncil/?hc_ref=ARRnBgB5wjzXM2WVklTkJEjIouU65moNyecQ_Nk9kl2u6X7ZrbRMOxr2wH7L-NI4_xI&fref=nf

համալսարանի,⁶⁰ Երևանի Հյուսիսային համալսարանի,⁶¹ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի,⁶² Երևանի պետական բժշկական համալսարանի⁶³ և այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների էջերն են: Այս էջերի հրապարակումները պարբերաբար «բուհ-բանակ» համագործակցության և «ազգ-բանակ» հայեցակարգի վերաբերյալ են:

Վերջաբան

2016թ. հոկտեմբերին «ազգ-բանակ» հայեցակարգի առաջադրումից հետո դպրոցներում «ռազմահայրենասիրական» քարոզչության աննախադեպ աճ է նկատվում: Ընդ որում այդ քարոզչությունը իրականացվում է ԿԳՆ և ՊՆ համագործակցությամբ: Պաշտպանության նախարարության և Ոստիկանության աշխատակիցներն ակտիվորեն մասնակցում են դպրոցներում քարոզչության տարածմանը:

Մշտադիտարկված ժամանակահատվածում «ազգ-բանակ» հայեցակարգի և «ռազմահայրենասիրական» քարոզչության տարածման համար կիրառվել են տարբեր գործիքներ՝ քննարկումներ, բաց դասեր, արշավներ, բանակումներ, շարադրությունների, նկարչության և ռազմամարզական մրցույթներ և այլն: Որոշ դպրոցներում անգամ ստեղծվել են հրաձգարաններ:

ՀՀ հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում քարոզչության տարածումը կենտրոնացված է և պարտադրվում է վերնից ներքև: Այս մասին են վկայում ՀՀ ԿԳՆ և ՊՆ տարբեր պաշտոնյաների հայտարարությունները, ուսուցիչներին «կյանքը հայրենիքն զոհաբերելու պատրաստակամությամբ» ուսանողներ դաստիարակելու համար պարզևատրումը Շիրակի մարզի ՏԻՄ կողմից, ինչպես նաև քարոզչական բովանդակություն ունեցող միջոցառումների աննախադեպ թիվը:

⁵⁹ «ԵՊՀ Մարտական պատրաստության ակումբ» աղբյուրը՝

<https://www.facebook.com/ysumilitaryclub/>

⁶⁰ Gavar State University (Գավառի Պետական Համալսարան) աղբյուրը՝

<https://www.facebook.com/Gavar-State-University->

[-209853689038173/?hc_ref=ARSQy5FTczHnGCryo1dDLifqJikaQQRdSvolUfreTVBMmjD8NhiYEGYo-](https://www.facebook.com/Gavar-State-University-%D4%B3%D5%A1%D5%BE%D5%A1%D5%BC%D5%AB-%D5%8A%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AC%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6-209853689038173/?hc_ref=ARSQy5FTczHnGCryo1dDLifqJikaQQRdSvolUfreTVBMmjD8NhiYEGYo-8ZlvYaSg4I&fref=nf)

[8ZlvYaSg4I&fref=nf](https://www.facebook.com/Gavar-State-University-%D4%B3%D5%A1%D5%BE%D5%A1%D5%BC%D5%AB-%D5%8A%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AC%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6-209853689038173/?hc_ref=ARSQy5FTczHnGCryo1dDLifqJikaQQRdSvolUfreTVBMmjD8NhiYEGYo-8ZlvYaSg4I&fref=nf)

[209853689038173/?hc_ref=ARSQy5FTczHnGCryo1dDLifqJikaQQRdSvolUfreTVBMmjD8NhiYEGYo-](https://www.facebook.com/Gavar-State-University-%D4%B3%D5%A1%D5%BE%D5%A1%D5%BC%D5%AB-%D5%8A%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AC%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6-209853689038173/?hc_ref=ARSQy5FTczHnGCryo1dDLifqJikaQQRdSvolUfreTVBMmjD8NhiYEGYo-8ZlvYaSg4I&fref=nf)

[8ZlvYaSg4I&fref=nf](https://www.facebook.com/Gavar-State-University-%D4%B3%D5%A1%D5%BE%D5%A1%D5%BC%D5%AB-%D5%8A%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AC%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6-209853689038173/?hc_ref=ARSQy5FTczHnGCryo1dDLifqJikaQQRdSvolUfreTVBMmjD8NhiYEGYo-8ZlvYaSg4I&fref=nf)

⁶¹ Երևանի Հյուսիսային համալսարան /Official/ աղբյուրը՝ <https://www.facebook.com/northern.am/>

⁶² Polytechnic Student Council աղբյուրը՝ <https://www.facebook.com/scnpuaN1/>

⁶³ Երևանի պետական բժշկական համալսարան/ Yerevan State Medical University աղբյուրը՝

<https://www.facebook.com/ysmuofficial/photos/a.1930237450543122.1073741940.1848584405375094/1930237557209778/?type=3>

Հաշվի առնելով այն, որ սույն զեկույցի հիմքում ընկած է միայն համացանցում առկա բաց տեղեկատվությունը՝ կարելի է եզրակացնել, որ այն արտացոլում է ՀՀ ուսումնական հաստատություններում ընթացող միլիտարիզացիայի գործընթացի միայն մի փոքր մասը: Թեման միանշանակ կարիք ունի հետազա ուսումնասիրության, քանի որ առավել խորը և բազմակողմանի հետազոտությունը թույլ կտա պարզել խնդրի իրական մասշտաբները: Այդուհանդերձ, սույն զեկույցում ընդգրկված տեղեկություններն արդեն իսկ բավարար են խնդրի կարևորությունը ընդգծելու համար: ՀՀ ուսումնական հաստատություններում քարոզչության մասշտաբների աննախադեպ աճը միանշանակ կարիք ունի լայն հանրային քննարկման: Քարոզչության ազդեցությունը նվազեցնելու ուղղությամբ քայլերի խթանումը պետք է դարձնել հասարակության ուշադրության կենտրոնում գտնվող հիմնահարց: